ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/77

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.07.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/77 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.07.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև Պատվիրատու) 2018 թ. հուլիսի 2-ի թիվ 1 որոշմամբ՝ քիմիական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններում պահանջվում են միանվագ օգտագործման ձեռնոցներ՝ լաբորատոր հետազոտությունների համար:

09.07.2018թ. գնահատող հանձնաժողովը թիվ 2 արձանագրության թիվ 1.5 կետով կայացված որոշմամբ մասնակիցների գնային առաջարկները համարել է սահմանված կարգին բավարարող:

19.07.2018թ. գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրության թիվ 2.2 կետով կայացված որոշմամբ հաղթող է ճանաչել «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին (թիվ 4-րդ և 6-րդ չափաբաժիններով՝ համաձայն արձանագրություն թիվ 2-ի Հավելված թիվ 1-ի տվյալների), իսկ թիվ 2.3 կետով կայացված որոշմամբ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացրել 302 400 (երեք հարյուր երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ-ն):

«Խաչպար» ՍՊԸ-ն համաձայն չէ այդ որոշումների հետ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության թիվ 1.5 կետով, թիվ 5 արձանագրության թիվ 2.2 և թիվ 2.3 կետերով կայացրած որոշումները՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի վերաբերյալ՝ թիվ 4-րդ և 6-րդ չափաբաժիններով մասով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու թիվ 2 արձանագրության թիվ 1.5 կետով կայացրած որոշումը՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը սահմանված կարգին բավարարող լինելու մասին, փոփոխելու թիվ 5 արձանագրության թիվ 2.2 և թիվ 2.3 կետերով կայացրած որոշումները՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի վերաբերյալ՝ թիվ 4-րդ և 6-րդ չափաբաժիններով մասով հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին, ինչպես նաև այդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչել հաջորդ մասնակցին, որը տվյալ դեպքում «Խաչպար» ՍՊԸ-ն է:

Համաձայն «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության թիվ 1 Հավելվածի, «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում թիվ 4-րդ, 5-րդ

և 6-րդ չափաբաժինների մասերով հայտում ներառված են եղել նաև ԱԱՀ-ները, ինչը հակասում է ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի թիվ 1317-Ն որոշմամբ հաստատված և 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած պահանջներին, համաձայն որոնց՝ բժշկական նշանակության ապրանքների օտարման դեպքում ԱԱՀ-ից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը տարածվում է թիվ 1317-Ն որոշման Հավելված 3-ի՝ բժշկական նշանակության ապրանքների ցանկում առկա ապրանքների վրա, որի թիվ 31-րդ և 32-րդ դասիչների տակ նշված են տարբեր չափերի անատոմիական և վիրաբուժական ռետինե ձեռնոցները:

Ընկերությունը գտնում է, որ «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է ղեկավարվեր այդ որոշման պահանջով և որպես սահմանված կարգի խախտումով կազմված գնային առաջարկ, պետք է մերժեր «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով, ինչը որ չի կատարվել գնահատող հանձնաժողովի կողմից:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.07.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.07.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, քանի որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին: Ինչ վերաբերվում է ԱԱՀ դաշտը լրացված լինելուն, ապա այն տվյալ դեպքում որևէ նշանակություն չունի, քանի որ նույնիսկ այդ դաշտը լրացված լինելու

պայմաններում «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը նվազագույնն է, քանի որ գնային առաջարկների համեմատումը և գնահատումն իրականացվում է առանց ԱԱՀ գումարի հաշվարկման:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար քիմիական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 4-6-րդ չափաբաժինների համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	միանվագ օգտագործման ձեռնոցներ_4	126 000 Մեկ հարյուր քսանվեց հազար	25 200 Քսանհինգ հազար երկու հարյուր	151 200 Մեկ հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր
2	միանվագ օգտագործման ձեռնոցներ_5	1 008 000 Մեկ միլիեն ութ հազար	201 600 Երկու հարյուր մեկ հազար վեց հարյուր	1 209 600 մեկ միլիոն երկու հարյուր ինը հազար վեց հարյուր
3	միանվագ օգտագործման ձեռնոցներ_6	126 000 Մեկ հարյուր քսանվեց հազար	25 200 Քսանհինգ հազար երկու հարյուր	151 200 Մեկ հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության Հավելված 1-ով՝ Ընթացակարգի 4-րդ և 6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած, իսկ 16.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից է ճանաչվել «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 20.07.2018թ. բողոքը, «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ***նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:***

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք

(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:***

ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1317-Ն որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» որոշման թիվ 3 հավելվածի 1-ին կետը սահմանում է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություն-ներում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

Նույն որոշման թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք ներառված են սույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:

Նույն որոշմամբ հաստատված բժշկական նշանակության ապրանքների ցանկի 31-րդ կետով նախատեսված է «տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ», իսկ 32-րդ կետով՝ «տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ»:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար քիմիական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-97» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի 4-6-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է ձեռքբերել միանվագ օգտագործման ձեռնոցներ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 4-6-րդ չափաբաժինների համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ ձևով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	միանվագ օգտագործման ձեռնոցներ_4	126 000 Մեկ հարյուր քսանվեց հազար	25 200 Քսանհինգ հազար երկու հարյուր	151 200 Մեկ հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր
2	միանվագ օգտագործման ձեռնոցներ_5	1 008 000 Մեկ միլիեն ութ հազար	201 600 Երկու հարյուր մեկ հազար վեց հարյուր	1 209 600 մեկ միլիոն երկու հարյուր ինը հազար վեց հարյուր
3	միանվագ օգտագործման ձեռնոցներ_6	126 000 Մեկ հարյուր քսանվեց հազար	25 200 Քսանհինգ հազար երկու հարյուր	151 200 Մեկ հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության Հավելված 1-ով՝ Ընթացակարգի 4-րդ և 6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած, իսկ 16.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից է ճանաչվել «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Այսպիսով՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն գնային առաջարկում առանձին տողով նախատեսել է նաև պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, այն պայմաններում, երբ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1317-Ն որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» որոշման համաձայն՝ մասնակցի կողմից առաջարկվող գնման առարկայի համար նախատեսված է ԱԱՀ-ից ազատման արտոնություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: ***<u>Միևնույն ժամանակ նույն կետի համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առանձին տողով ԱԱՀ-ի գումար նախատեսելը՝ տվյալ գործարքի գծով ԱԱՀ վճարելու պարտավորության բացակայության պայմաններում, չի կարող դիտարկվել որպես վերջինիս հայտը մերժելու հիմք, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց ԱԱՀ-ի հարկի գումարի հաշվարկման, այն է՝ արժեքով (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը), ինչը և իրականացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:***

Դրա հետ մեկտեղ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված գնային առաջարկների արժեքով (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) գնահատման արդյունքում «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ վերջինիս ներկայացրած գնային առաջարկի մեջ նշված արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նվազագույնն է եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից գնային առաջարկի մեջ ԱԱՀ-ի գումարի նախատեսումը չի հանգեցնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սկզբունքների խախտման և անհավասար պայմաններ չի ստեղծում այլ մասնակիցների համար:

Այլ հարց է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 425-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկային հաշիվների դուրս գրման սահմանափակումների խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկ վճարողները պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե, եթե դուրս գրված հարկային հաշիվը սահմանված կարգով չեղյալ չի համարվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի գնային առաջարկը, գործել է իրավաչափ, ուստի գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.07.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**